

Թ Ի Ի 16

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ 1913-14 ՇՐՋԱՆԻ

ԵՐԵՍՓՈՒՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹԵՆԷՆ ԵՏՔԸ

ՆԻՍՏ ԺԶ.

27 Սեպտեմբեր 1913



Տպագրութիւն Տ. ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ, Պապը-Ալի ձառտէսի, Թիւ. 49

1914

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ

(Ա. Վ. ինակ)

- 1. Տ. Եղիշէ Արքեպս. Դուրեան
- 2. Տ. Վահրամ Կ. Մանկունի
- 3. Տ. Զարմայր քհնյ. Կէղիւրեան
- 4.

(Բ. Վ. ինակ)

- 5. Տ. Մաղաքիա Արքեպս. Օրմանեան
- 6. Տ. Գրիգորիս Ծ. Վ. Պալազեան
- 7. Տ. Երուանդ Ծ. Վ. Բէրտահնեան
- 8. Տ. Սմբատ Ծ. Վ. Գաղաղեան

(Գ. Վ. ինակ)

- 9. Տ. Շմայեակ Արքեպս. Դիմաքսեան
- 10. Տ. Մաղաքիա Եպիսկ. Տէրունեան
- 11. Անանիա Վ. Հաղարապետեան
- 12. Տ. Միքայէլ քհնյ. Աշնեան

(Դ. Վ. ինակ)

- 13. Տ. Արիստակէս Ա. քհնյ. Զիզմեան
- 14. Տ. Խորէն Գ. Զարուհիւնեան
- 15. Տ. Զուսէկ Գ. Բաշունի
- 16. Տ. Տաճատ Գ. Փաշայեան

(Ե. Վ. ինակ)

- 17. Տ. Եղիշի Ծ. Վ. Պապեան
- 18. Տ. Շմայեակ Բաժ. Էքսէրնեան
- 19. Տ. Բարձր Գ. Թազրմեան
- 20. Տ. Աբէլ Գ. Երէջեան

ԱՇԽԱՐՀԱԿԱՆՔ

(Ա. Վ. ինակ)

Էյուպ Ս. Եղիա

- 21. Օննիկ էֆ. Մինասեան

Խասգիւղ

- 22. Պետրոս էֆէնտի Հալաբեան
- 23. Պետրոս Ե. Խօրաբանեան
- 24.

Մագրիբիւղ

- 25. Երուանդ էֆէնտի Պէյազմեան
- 26. Թազրմ Ե. Արեւեան
- 27. Տօթ. Ե. Մալխասեան
- 28. Յակոբ Ե. Պոյազմեան
- 29. Յովնանէս Ե. Իսազուլեան
- 30. Սաբգիւս Ե. Պէհրեկեան
- 31.

Պէյոյիւքուէրէ

- 32. Արշակ էֆէնտի Ալօյազմեան
- 33. Յովսէփ Ե. Գաղաղեան

Սան-Սթէֆանօ

- 34. Գէորգ էֆ. Ասլանեան
- 35. Խսիկ էֆէնտի Սըվաճեան
- 36. Տօթ. Ստեփան էֆէնտի Թէրզեան

(Բ. Վ. ինակ)

Բերա-Գասը Բ. փաշա

- 37. Աստուածատուր էֆէնտի Էաշատեան
- 38. Արամ Ե. Հալաբեան
- 39. Արմենակ Ե. Բալսեղեան
- 40. Գէորգ Ե. Թորգումեան
- 41. Գիգոր Ե. Շահլաբեան
- 42. Յովնանէս Ե. Զէօկիւրեան
- 43. Սարգիս Ե. Մինասեան
- 44. Տր. Վ. Ե. Թորգումեան
- 45. Յտեփան Ե. Գարաբան

Գարմալ-Գնալը

- 46.

Գուրուբէշմէ

- 47.

Պէշիկթաշ

- 48. Տրդատ Պէշ Տատեան

Ֆէրիգիւղ

- 49. Երուանդ էֆէնտի Գարակէօղեան
- 50. Հրանտ Ե. Ասատուր
- 51. Մարկոս Ե. Նաթանեան
- 52. Յակոբ Ե. Պահրի

(Գ. Վ. ինակ)

Գատրգիւղ

- 53. Անտոն էֆէնտի Թա. ագ
- 54. Աղասի Ե. Ալաբեան
- 55. Երուանդ Ե. Շիրինեան
- 56. Ներսէս Ե. Օհանեան
- 57. Մկրտիչ Ե. Աբգարեան
- 58. Պէնէ Ե. Թորոսեան
- 59. Սարգիս Ե. Էսմէրեան

Եէնի-Փարուս

- 60. Պենոն էֆէնտի Տէյիրմէնեան
- 61. Վահան Ե. Փափաղեան

Պալաթ

- 62. Տօթ. Կարապետ էֆէնտի Եաղուպեան
- 63. Յարութիւն էֆ. Մոստիչեան
- 64. Սարգիս Ե. Սրենց
- 65. Հրանտ Ե. Անդրէասեան

Սկիւտար Եէնի-Մահալլէ

- 66. Թորգոմ էֆէնտի Պոյազմեան
- 67. Հմայեակ Ե. Խոսրովեան
- 68. Վահան Ե. Սուրենեան

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

ԲԱՑՈՒՄ 1913—1914 ՆՍՏԱՇՐՋԱՆԻ

ՆԻՍՏ ԺԶ.

4 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1913

ՆԱԽԱԳԱՀ.—ՊԱՏՐ. ՏԵՂԱՊԱՀ Տ. ԳԱՔՐԻԷԼ ՍՐԲԱԶԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ.—ՏՐ. ՏԱՂԱԽԱՐԵԱՆ ԷՖԷՆՏԻ

ՕՐԱԿԱՐԳ

ՏԵՂԵԿԱԳԻՐ ՄԱՅՐ ԴԻԻԱՆԻ Ի ՄԱՍԻՆ ՕՐԱԿԱՐԳԻ ԽՆԴՐՈՅ

ԲԱՑՈՒՄ ԺՈՂՈՎ ՈՅ

Նիստը տեղի ունեցաւ Ղալաթիոյ Խորհրդարանը եւ ժամը 3ին ստեղծուեցաւ ի ներկայութեան 60 երեսփոխաններու, որոնց թիւը յետոյ յանգեցաւ 73ի:

ԲԱՑԱԿԱՑՈՒԹԻՒՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՔ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Մեր պաշտօնակիցներէն Տ. Հմայեակ եւ Տ. Վահրամ Սրբազանները, ինչպէս նաեւ Ոսկան Մարտիկեան, Գեղամ Տէր-Կարապետեան եւ Նուանդ Խորասան էֆէնտիները բանաւոր պատճառներով այսօրուան նիստէն իրենց բացակայութիւնը յայտնած են. կ'արձաւորուին զիրենք օրինաւոր բացակայութեամբ:

ՀՐԱԺԱՐԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆՈՒԹԵՆԷ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ազգ. երեսփոխան Յարութիւն էֆ. Մոստիչեան հետեւեալ հրաժարագիրը զրկած է:

(Ատենադպիր էֆ. Կարդաց հետեւեալ հրաժարագիրը)

Վսեմաշուք Ատենապետ էֆէնտի

Ազգ. Պատկ. Երեսփ. Ընդհ. Ժողովոյ

Դատական պաշտօնիս զբաղմունքը այս օրերս չափազանց շատցած ըլլալով, ստիպուած եմ, նոյն իսկ ուրբաթ օրերը, տան մէջ, առօրէն իմ ուսումնասիրութեամբ զբաղիլ. հետեւորար Պատկառելի Ժողովոյդ անգամակցութենէն վերջապէս կը հրաժարիմ:

Հաճեցէք ընդունիլ յարգանացս հաւատարմութիւնը: Յարութիւն Մոստիչեան



ՁԱՅՆԵՐ.— Ստիպողական գործերու համար բացակայութիւնը ներելի է:

(Ատենապետ էֆ. քուէի գնելով սոյն հրաժարականը Յի դէմ 16 քուէով մերժուեցաւ):

ՅԱԻԱԿՑԱԿԱՆ ԱՐՏԱԹԱՅՏՈՒԹԻՒՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ազգ. թերթերէն անշուշտ տեղեկացաք թէ Վանայ Առաջն. Տեղապահ Սարաճեան Սրբազան այս օրերս կնքեց իր կեանքը: Հանգուցեալը Ազգին եւ եկեղեցւոյն ճշմարտապէս ծառայող յարգելի եկեղեցական մըն էր: Ինք եղած է առաջին հովիւը Ամերիկայի հայութեան, որոց ազգային ոգին պահպանելու համար նուիրած է ամէն ջանք եւ ջանքով թիւն, Սահմանադրութեան հոչակումէն յետոյ կոչուեցաւ Վանայ Տեղապահութեան պաշտօնին զոր կը վարէր ցարդ. կը հրաւիրեմ զձեզ որպէս զի մասնակցիք Սրբազան նախագահին կողմէ արտասանելի աղօթքին:

(Ժողովականք յօանկայս, Ս. Տեղապահ Հայրը օրհնեց հանգուցեալին յիշատակը):

ՊԱՇՏՈՆԱԳԻՐ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ազգ. կեդր. վարչութիւնը նորընտիր Սրբազան Պատրիարք Հայրը զիմաւորելու համար, կարեւոր դատուած կարգադրութեանց մասնակցելու նպատակով պաշտօնագիր մը ղրկած ըլլալով մեզ, Դիւանս պիտի որոշէ իր հրաւիրակները:

Բ.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.—Անցեալ նիստին, երուսաղէմի կանոնադրին երեք յօդուածները վաւերացուելու առթիւ, պաշտօն յանձնուեցաւ Ազգային վարչութեան, որ 4րդ յօդուածին առժամեայ տրամադրութեան տեղ՝ մէկ քանի յօդուածէ բաղկացեալ ծրագիր մը բերէ օրէնքին գործադրութեան հակառակօրէն: Դէմ ի գործ դրուելիք պատժական տնօրինութեանց մասին: Վարչութիւնը այդ աշխատութիւնը կատարած ըլլալով այս նպատակաւ ղրկած պաշտօնագիրը կը յանձնեմ ձեր ուշադրութեան:

(Ատենադպիր էֆ. կարդաց հետեւեալ գիրը):

Աղնուաշուք Ատենապետ էֆէնտի
Ազգային Պատկ. Ընդհ. Ժողովոյ

Պատկ. Ժողովոյ՝ Ազգային վարչութեան առաջարկութեան վրայ՝ հաճած էր անշատաբար քննել երուսաղէմի հիմնական կանոնադրի նախագծին 4, 32 եւ 36րդ յօդուածները, եւ Մայր Դիւանն նախորդ ամսոյ 21 թուականաւ գրով ի մէջ ալ լոց, ծանուցած էր թէ՝ ջնջուած է 4րդ յօդուածին յարակից առժամեայ տրամադրութիւնն՝ խորհրդարանական Յանձնաժողովոյ կողմէն: Երբեք թուած բացառութեանց վրայ, պայմանաւ որ վարչութիւնն անոր հետ համախորհուրդ օրինագիծ մը ներկայացնէ՝ վաւեր մէջ կարգու կանոն եւ բարեկարգութիւնն պահպանելու եւ ամրապնդելու համար:

Պատկառելի Ժողովիդ այս յանձնարարութեան համաձայն՝ իման ժողովն այս մասին ստանալէ յետոյ խորհրդարանական Յանձնաժողովոյ կարծիքն, ծրագրեց հետեւեալ օրինական առժամեայ տրամադրութիւններն՝ երեք յօդուածով, որոնք են՝

1.—Երուսաղէմի Ս. Յակովբեանց վանւց հիմնական նոր կանոնադրէն մինչեւ ցարդ Ազգ. Ժողովէն քուէարկուած յօդուածներն, ինչպէս նաեւ այսուհետեւ պարբերաբար քուէարկելի յօդուածները Ազգ. կեդր. վարչութեան յանձնուած թուականէն սկսեալ գործադրելի են:

2.—Հիմնական սոյն կանոնադրին մասամբ թէ ամբողջովին գործադրութեան դէմ Միաբանութեան կողմէն ընդդիմութիւն ծագած պարագային, ինչպէս նաեւ վաւեր մէջ կարգու կանոն եւ բարեկարգութիւն պահպանելու եւ ամրապնդելու նպատակաւ՝ վարչութիւնն արտօնեալ է իր յարմար դատած եղանակաւ եւ անմիջական կերպով ի գործ դնել ա՛յն ամէն միջոցները, որոնց կիրառումն անհրաժեշտ կը դառնայ:

3.—Սոյն առժամեայ եւ բացառիկ տրամադրութիւնը պիտի դադրի գործա-

դրութենէ ա՛յն ատեն միայն, երբ հիմնական կանոնագիրը իր ամբողջութեամբ վերջնականապէս ընդունուի Ազգային Ժողովէն, եւ գործադրութիւնը ապահովուի:

Հետեւաբար՝ այս երբեակ յօդուածներն ներկայացնելով Պատկ. Ժողովոյդ նկատաւման, կը խնդրենք փութացնել նաեւ անոնց վաւերացումը, որ առաջ վերջ դրուելու համար երուսաղէմի Ս. Աթոռին արդի անկերպարան վիճակին, եւ կը փութանք միանգամայն ի տեղեկութիւն ծանուցանել թէ՝ հիմնական նոր կանոնադրի 32րդ յօդուածով նախատեսեալ խնամակալութիւնն կազմուած եւ հրաւիրուած է ձեռնարկել ի պաշտօն:

Մնամք խորին յարգանքօք

Ի զիմաց Ազգ. կեդր. վարչ. իման Ժողովոյ

Դիւան Քաղաքական Ժողովոյ

Ատենադպիր Ատենապետ

Ա. Յ. Գաւապետեան Ս. Գաւապեան

Դիւան կրօնական Ժողովոյ

Ատենադպիր Բ. Ատենապետ

Երուսաղէմի վրդ. Մ. Ն. Տեղապետ

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Վարչութեան այս ծրագիրը նկատողութեան կ'առնենք քիչ մը վերջը, երբ ատենական ընթացիկ գործերը աւարտին:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ ԵՐԵՍՓՈՒՆԱՆՑ

Ա.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Մեր պաշտօնակիցներէն Գ. Նեմյէ էֆ. զիր մը ունի: Այս գիրը ղրկենք վարչութեան, որովհետեւ աւելի անոր կը պատկանի քան թէ Ժողովոյ:

Գ. Նեմյէ էֆ. — Պէտք է կարգացուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ժողովը չենք կրնար զբաղեցնել իրեն չվերաբերող գործերով: Այսպէս կարգադրուած է:

Գ.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Մեր պաշտօնակիցներէն վահան փափազեան էֆ. ալ առա-

ջարկութիւն մը ունի, կը հրաւիրեմ Ատենադպիր էֆ. կարդալ զայն:

(Ատենադպիր էֆ. կարդաց հետեւեալ գիրը):

Վսեմ. Ատենապետ

Պատկ. Ազգ. Ժողովոյ,

Դրերու գիւտի եւ ապագրութեան համազգային տօնին առթիւ Վեհ. Կաթողիկոսը իր 12 Յունիս կոնդակով բաղձանք կը յայտնէր որ Թրքահայերը եւս ընդհ. հանգանակութեան ձեռնարկէին հիմնելու համար կրթական ֆօնտ մը:

Վեհ. Կաթողիկոսի սոյն բաղձանքը, հաւատացած եմ, որ բաղձանքն է նաեւ բովանդակ Թրքահայերու, ուստի կ'առաջարկեմ, որ Ազգ. այս Ժողովը ընդունուած հոչակելով կրթական ֆօնտի մը հաստատութիւնը, իր մեջէն յատուկ կեդրոնական հանգանակիչ յանձնաժողովի մը պաշտօն յանձնէր ընդհ. հանգանակութեան ձեռնարկելու՝ մէկ տարի շարունակելի ըլլալու պայմանով:

Եւնիգարուի ազգ. երեսփոխան Վահան Փափազեան

Պ. ՓԱՓԱՋԵԱՆ ԷՖ.—Եթէ կարելի է, այս մասին պէտք եղած խորհրդակցութիւնը յատուկ նիստի մը վերապահենք:

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ ԷՖ.— Ժողովս եթէ կ'ընդունի իմ այս առաջարկը, պէտք է նախ հանգանակութիւնը բացուած հոչակէ, եւ Յանձնաժողովոյ անուններու ցուցակ մ'ալ պատրաստած եմ, եթէ կը ներէք կը կարգամ, եղիչէ Սրբ. Դուրեան, Հմայեակ Արք. Դիմաքսեան, Սմբատ Մ. վրդ. Գաղաթեան, Տօքթ. Ն. Տաղաւարեան էֆ., Եղ. Գարակէօզեան էֆ., Հրանտ Ասատուր էֆ., Գր. Զօհրապ էֆ., Պետրոս Հալաճեան էֆ., Դէորդ Արսլանեան էֆ., Յակոբ Էսայեան էֆ.:

ԵԴ. ՇԻՐԻՆԵԱՆ ԷՖ.—Առանց օրինագիծի կարելի չէ հանգանակութիւն կատարել, նախ կանոն մը պատրաստենք, յետոյ հանգանակութեան կ'սկսինք:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Որովհետեւ կրթական ֆոնտի կազմութեան առաջարկը Հայրապետական կոնգրակով հաղորդուած է մեզ՝ Ժողովս պարտաւոր է իր մէջէն այդ նպատակով մարմին մը կազմելու. եթէ պէտք տեսնուի օրինադիմ մ'ալ կրնայ բերուիլ Ժողովիս, քուէարկուելու համար:

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ ԷՖ. — Ուրեմն քուէի դէք առաջարկս:

(Ատենապետ ԷՖ. քուէի պնդումը յանձնաժողովոյ մը կազմութեան առաջարկը, միաձայնութեամբ ընդունուեցաւ):

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն Յանձնաժողովը կազմուած է քիչ առաջ յիշուած անուններով. կը մաղթենք որ իրենց աշխատութիւնը արդիւնաւոր ըլլայ եւ անմիջապէս դործի սկսին:

Դ.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Մեր պաշտօնակիցներէն Դր. Զօհրապ ԷՖ. կրթական խնդրոյն համար առաջարկութիւն մ'ունի Զերուշադրութեան կը յանձնեմ:

(Ատենապետ ԷՖ. կարգաց հետեւեալ գիրը):

Վսեմաշուք Ատենապետ ԷՖէնտի

Հայութեան վերականգնումը միայն քաղաքականութեամբ ձեռք չի կրնար բերուիլ. անոր մէջ մեծագոյն բաժինը դարձեալ կրթութեան կ'իյնայ. Բայց կրթութիւնը մեր ազգին մէջ ամէնէն աւելի անտեսուած գործն է: Ապացոյց, Երեսփոխանական Ժողովին սա հինգ տարուան շրջանին մէջ օրակարգին վրայ ազգային կրթութեան վերաբերող խնդրոյ մը չ'հանգիպելնիս: Եթէ ազգային մարմին մը կայ որով ամէնէն քիչ կը հետաքրքրուինք, ասիկա Ուսումն. Խորհուրդն է, ազգային իշխանութեանց ամուլ ժամավաճառութեանց մէջ ամէնէն աւելի սուղի նստողը Ուսումն. Խորհուրդին է: Յաճախ այդ գանգատները յայտնուած են, բայց դարման խորհող եւ գործի ձեռք զարնող մը չէ գտնուած:

Հինգ տարիէ ի վեր պետական դպրոցները բացուած են մեզի՝ այդ վարժարանները իրենց բոլոր պակասութիւններովը մէկտեղ, մեծ օգուտներ կրնան ընծայել մեր պատանութեան. բայց անոնցմէ օգտուելու համար ու եւ պատրաստութիւն տեսած չենք: Անդին Թուրք կառավարութիւնն ալ սխալ քաղաքականութեան մը հետեւելով, հայերէն լեզուի դասերը ջնջեց իր դպրոցի յայտագիրներէն: Ոչ ոք այդ խնդրով հետաքրքրուեցաւ, ոչ ալ այդ դասերը վերահաստատուելու համար դիմում մը եղաւ: Պետական կրթական պիւտճէն մեզի յատկացուած մասին համար ալ նոյն իսկ անփոյթ գտնուեցանք:

Վերջապէս, պետութեան ծախքով եւրոպայ ուսանող զրկելու մասին վերջերս հաստատուած դրութենէն մեր բաժինը կանոնաւոր ձեւով մը ձեռք բերելու համար անգամ աշխատութիւն չկատարեցինք: Ոչինչ ըրինք մէկ խօսքով, սա վերջին հինգ տարուան շրջանին մէջ:

Տարօրինակ զուգադիպութեամբ մը ճիշդ այն պահուն ուր Հայկական հարցը կը յուզուի, այլեւայլ կողմերէ Հայոց կրթական գործին օժանդակելու համար արամազորութիւններ կը յայտնուին: Բայց մենք այդ տրամադրութիւններուն գործնական ձեւ մը տալու վիճակի մէջ չենք: Իսկ մեր ազգային վարժարաններու վիճակը, այս ժամանակամիջոցի մէջ բարեփոխուած տեղ, վատթարացաւ: Պէտք չէ խաբուիլ չըջանաւարտներու թիւէն: Անոնց ուսման մասկարգը իջած է: Ոչ գիտութեանց, ոչ ալ օտար լեզուներու մէջ, յատկապէս թիւ՝ պետական վարժարաններու մէջ եւ թէ Եւրոպայի համալսարանները ուսում առնող կարգ մը Հայ երիտասարդներու յետաձգութեան գաղտնիքը ստոր մէջ է:

Պատիկ ու մասնակի յաջողութեանց արձագանքը, լրացական ծանուցումներով բազմապատկուած, կրնայ մեր ազգային եսասիրութիւնը գոյեւ. անդին շատ մը ձախողութիւններու ձայնը մինչեւ մեզի չի գար եւ Հայ ուսանողութեան ընդհանուր անկեալ վիճակը կը ծածկուի մեզմէ:

Այս ողբալի վիճակին դարման տանելու համար, հետեւեալ առաջարկութիւնները կը բերեմ Ազգ. Երեսփ. Ժողովին:

Նախ եւ առաջ իրեւ հիմնական ուղղութիւն ընդունելու ենք որ մեր կրթութիւնը, այսուհետեւ, գիտական (scientific) եւ արհեստական (technique) շաղի մէջ մտնելու է: Հարկաւ գրականութիւնը միշտ յարգելի կը մնայ ամենուս, բայց 20րդ դարը գիտութեան եւ արհեստի դարն է: Տնտեսական, եւ անոր զուգընթաց, մրտաւորական զարգացումը որ ազգային պահպանումին մէջ ամենէն զօրաւոր դերակատարն է, առանց գիտութեան ձեռք չի բերուիր: Կրօնքին չափ, լեզուին չափ, տնտեսական եւ մրտաւորական զարգացումն է որ մեր ազգին գոյութիւնը պիտի պահպանէ կեանքի պայքարին մէջ: Եթէ մօտաւոր անցեալին վրայ աչք մը նետենք, կը տեսնենք որ դար մը առաջ Թուրքիոյ Հայերը իրենց զօրաւոր դիրքը՝ Ֆինանսը, վաճառականութիւնը եւ արհեստները իրենց ձեռքին մէջ ունենալով կազմած էին Հայերը գիտական նորութիւններէ հեռու մնալով, այդ երեք ճիւղերու մէջ ալ ինկան: Վերջին 50 տարուան շրջանին մէջ Ֆինանսը բոլորովին կորսնցուցինք, արհեստներու մէջ խղճալի վիճակի մը հասանք, քիչ մը առուտուր մնացած է ձեռուրնիս, այն ալ գիտական միտքով գինուած վաճառականութիւնը չէ, այլ խանութպանի առուտուր, որ անօթի մնալով խնայողութիւն կ'ընէ եւ նոր պէտքերու համար գոհացում ու դիւրութիւն ձարելէ աւելի՝ ոչ գովելի հրաբաններով եւ ճարպիկութիւններով զրամ չահելու կը ձգնի: Այս է մեր վաճառականութեան ընդհանուր նկարագիրը, այս է բուն ճշմարտութիւնը:

Եւրոպական արհեստները եւ վաճառականութիւնը այսօր Տաճկաստանէն ներս խուժելու վրայ են: Մեր գլխաւոր հրապարակները արդէն գրաւուած կրնան համարուիլ: Այդ տեղումները Հայ վաճառականը եւ Հայ արհեստաւորը Եւրոպացիին հետ մրցելու անկարող են: Անապօլուի խորքերը Հայերը Թուրքերու հետ բազմա-

տելով անհամեմատ բարձրութիւն մը ունին այս ճիւղերու մէջ, բայց երկաթուղիներու շինութեամբ—որուն ամենէն աւելի Հայերն են բաղձացողները—Եւրոպացի տարրը մուտք գործելու վրայ է հոն ալ եւ հետզհետէ պիտի յառաջանայ:

Անոնց հետ մրցելու չափ նոր մեթոտներու տիրանալու ենք շուտով, եթէ չենք ուզեր բոլորովին փճանալ: Պէտք է փութով մեր վաճառականութիւնը եւ մեր արհեստները գիտական միտքով նորոգել եւ կազդուրել: Եւ միեւնոյն կերպով զօրացնելու ենք Հայ երկրագործութեան յետաձգութեանը Հայաստանի եւ Կիլիկիոյ մէջ: Այս բոլորը ընելու համար նախ մեր վարժարանները ստիպողաբար բարելաւագրելու պարտաւոր ենք, եւ յետոյ թէ՛ Եւրոպայի եւ թէ՛ տեղական վարժարաններու մէջ մեր ուսանողներու վիճակը կանոնաւոր հոգածութեան առարկայ ընելու ենք:

Ձեռք առնուելիք միջոցները կրնանք ուրեմն երեք մեծ գլուխի բաժնել:

Ա. կրթութիւնը ազգային վարժարաններու մէջ:

Բ. կրթութիւնը օտար հաստատութիւններու մէջ (պետական եւ եւրոպական):

Գ. Լրացուցիչ տնօրինութիւններ:

Առաջին մասին համար, կրթական յայտագիրները հաշտեցնել, ընել եւ օտար լեզուներէն խստ մար, գիշերու սախօսութիւն կան մարմինը բարձրացնելու կան կացութիւնը Երկրորդ չափ եթէ սիկ իմ մտ Եւրոպ:

rique) եւ ագարակները մէյմէկ վարժարան են իրօք Մեր պատանութեան մէկ մասը զարգացնելու մէջ զբաղեցնելու համար մէկ չէ, անիկա աւելի գործի կեանքի, շարժումի անձուկը ունի Սյդ պատանութեան մաս մը, հետք եղածին չափ մեծ թիւով, Եւրոպայի գործարաններուն եւ ագարակներուն մէջ զետեղելու է. անիկա արհեստական եւ գիտական կրթութեան Ա. աստիճանը կրնայ կազմել, այսինքն տեսակ մը քանութիւնը աշակերտութիւն: Երկրորդը պիտի ըլլայ Եւրոպայի Technicum-ներու, Ecole professionnelle-ներու, Ecole des Arts et Mètièrs-ներու, Fermes-Ecole-ներու մէջ Հայ ուսանողութիւն մը, որ 3 տարեկէն ոչ աւելի ժամանակամիջոցի մէջ զանազան ճիւղերու համար պատրաստուած ingénieur-ներ պիտի պատրաստէ: Երրորդը եւ բարձրագոյն աստիճանը պիտի ըլլայ, համալսարանական, գիտական ուսանողութիւնը: Ահա այս երեք տեսական աղբիւրներով է միայն որ մարցաձեռք տնտեսական կեանքը ոռոգել եւ արդիւնաւորել հնարաւոր պիտի ըլլայ, միանգամայն մեր խաթարեալ եւ յետամնաց մտայնութիւնն ալ գիտական սնունդով մը պիտի կազմուի:

Եւրոպայի մէջ մեր ուսանողութիւնը ահա այս եղանակով պէտք է կազմակերպել, եւ ոչ թէ, այսօր եղածին պէս, ինքնագլուխ, անկերպարան վիճակի մէջ ձգել, զուրկ ու եւ է առաջնորդող միտքէ եւ հոգածութենէ:

Նոյն բանը կրնանք ըսել նաեւ պետական վարժարաններու Հայ ուսանողութեան համար: Այս ուղղութեան, հսկողութեան եւ անկեղծութեան գործը հոն ալ կազմակերպելու է:

Հիմակ այս երեք մասին մանրամասնութիւններն ալ թուեմ:

Ա.

Եւրոպայի մէջ Ս. զգալի վարժարաններու մէջ

1.—Ա. զգ. վարժարաններու յայտագիրը

ներուն ու ժ տալով, դասագիրքերու եւ դասաւանդութեանց նոր մեթոտներու հետամուտ ըլլալ եւ զանոնք ներմուծել մեր վարժարաններու մէջ, քննութիւններու լուրջ հանգամանքը խստիւ ապահովել:

2.—Պետութեան պիւստէին մեղի յատկացուած բաժնին բաշխումին հսկել, զայն աւելցնելու աշխատիլ եւ փաստերը պատրաստել:

3.—Հայ ուսուցիչներու ամէն մէկի համար fiche-եր հաստատել, ամէն մէկին ուր եւ ո՞ր աստիճան ուսում առած ըլլալը, պաշտօնավարութեան տեւողութիւնը, անցքերը եւ յաջողութեան աստիճանը շարունակական կերպով նշանակել, ուսուցչական ժողովներ կազմել, դասախօսութիւններ կատարել տալ, արժանաւորներու համար վարձատրութիւններ սահմանել, անոնց ներկան բարելաւելու եւ ապագան ապահովելու համար ֆոնտ մը հիմնել, յառաջդիմութեան պայմանները ճշգրիտ կանոնադրով մը եւ գործադրութեան հսկել:

4.—Բոլոր Տաճկահայ դպրոցներու վիճակագրութիւնը կազմել եւ շարունակել անխափան:

5.—Ա. զգ. վարժարաններուն եւ Հայ մանկապիտան կրթութիւն տուող անհատական վարժարաններու վրայ հսկել եւ տեղեկագրով արդիւնքը տեղեկագրել շարունակաբար:

Բ.

Եւրոպայի մէջ օտար վարժարաններու մէջ

(Պեսական եւ Եւրոպական)

6.—Պատրիարքարանը կրթական նախարարութեան հետ տեսակցելով պէտք է որ պետութեան ծախքով Եւրոպա զրկուելիք Հայ ուսանողները իր կողմէ ներկայացնելու իրաւունքը ճանչցնել տայ եւ Հայ ուսանողներու թիւը աւելցնէ:

7.—Տեսակցելու է Եւրոպական գեապանատուններու հետ, անոնց օժանդակութեամբ ալ Եւրոպա որոշ թիւ մը ուսանողներ զրկելու միջոցը ձեռք բերելու համար: Պատրիարքարանը ամէն դէպքում

թիւն պիտի գտնէ գեապանատուններու մօտ:

8.—Եւրոպա զրկուելիք ուսանողութեան բոլոր թիւներուն մրցումով պէտք է որոշել եւ զանոնք յատուկ դասընթացքով կամ ուրիշ միջոցով նախապատրաստել:

9.—Հայ ուսանողութիւնը տեղափոխելու է ընդհանրապէս արհեստական եւ երկրագործական գործնական վարժարաններու եւ պզտիկ մաս մը միայն համալսարաններու գիտական ճիւղերու մէջ:

10.—Պէտք է Եւրոպական գործարաններու եւ ագարակներու մէջ կարելի եղածին չափ շատ թիւով պատանիներ եւ երիտասարդներ տեղափոխել իբրեւ գործաւոր-աշակերտներ:

11.—Այս ուսանողութիւնը շարունակ հոգածութեան առարկայ ընել, անոնց առաջդիմութեանը հետեւիլ, եւ, ի հարկին, օժանդակել անոնց, մեծ յաջողութիւն ցոյց տուողներուն մրցանակներ հաստատել, օրինակի համար ձրի ճամբորդութիւններ ընել տալ (bourse de voyage), միայն համար պէտք է Եւրոպա զրկուած ամէն մէկ աշակերտ-բանուորին եւ արհեստական երկրագործական եւ համալսարանական ուսանողին համար fiche մը բռնել անոր աշակերտական եւ ուսանողական շրջանին մէջ եւ նոյն իսկ անկէ վերջ վարած կեանքին, յաջողութեան կարեւոր անցքերը նշանակելով ամէն մէկի վրայ որոշ գաղափար մը ունենալու եւ անոր համեմատ՝ արտաքին մանի Հայ ուսանողութեան որ աստիճանի յաջողած ըլլալը հասկնալու համար:

12.—Օմ. պետական վարժարաններու Հայ ուսանողութեան համար թէ՛ նախապատրաստութեան, թէ՛ հսկողութեան եւ պետութեան համար վերը բաժնի օժանդակութեան համար գործադրուած տրամադրութիւնները գործ դնել: Ասով ամբողջ Հայ ուսանողութեան պատկերը միշտ աչքի առջեւ կ'ունենանք եւ ըստ այնմ Ա. զգ. պէտք եղած ուղղութիւնը կուտայ իր կրթական գործունէութեան:

13.—Ասկէ զատ, պէտք է պետական վարժարաններու համար՝ Պոլսոյ մէջ, Եւրոպայի համալսարաններու եւ այլ վարժարաններու ուսանողներու համար՝ կարեւոր կեդրոններու մէջ — օրինակի համար Բարիզ եւ Փրնէզ — ուսանողական տուններ հաստատել եւ այս նպատակով ի հարկին դրամական նպաստներ յատկացնել եւ ուրիշ կարգի քաջալերութիւններ տալ: Հայ ուսանողութիւնը Եւրոպայի մէջ վատասերու մէ պահպանելու եւ ազգային ոգին անոր մէջ վառ պահելու համար այս կարգի եւ ուրիշ նմանօրինակ միջոցներ գտնել:

14.—Եւ որպէս զի Եւրոպա զրկուելիք ուսանողութիւնը սկիզբէն ամէն լիակատար տեղեկութիւն ունենայ կրթական տար հաստատութեանց վրայ եւ ըստ այնմ որոշում մը տայ եւ ընտրութիւն մը ընէ, պէտք է Եւրոպական բոլոր արհեստական, երկրագործական հաստատութեանց եւ համալսարաններու ցուցակները, յայտագիրները, մուտքի պայմանները եւ անոնց վերաբերեալ ամէն շահեկան տեղեկութիւնները հաւաքել, դասաւորել եւ ամէն գիտում ընող երիտասարդի տրամադրելի դարձնել: Միեւնոյն աշխատութիւնն ընել պետական վարժարաններու մասին:

Գ.

Լրացուցիչ միջոցներ

15.—Պէտք է կրթական հանգէս մը հրատարակել, զոնէ ետաձեռայ, ուր՝ համառօտիւ տեղ տրուի օտար պետութեանց կրթական արհեստական եւ երկրագործական հաստատութեանց տեղեկագրերուն, օտար կրթական բոլոր նոր օրէնքներուն, պետական կրթական օրէնքներուն եւ պիւստէի. հետամուտ ըլլալ ամէն նորութեանց եւ զանոնք ճանչցնել այս հրատարակութեամբ, կրթական մեծ pèriodique-ները եւ ամէն կարեւոր հրատարակութիւնները ստանալ, անոնց շահեկան մասերը ծանօթացնել, մեր ազգին կրթական գործերն ու պատկերներն ալ ներկայացնել անոր մէջ:

տուութեան մը աստիճանին, եւ անոր հրատարակութիւնը, եւ ատենագրութեան մէջ արձանագրութիւնը, ապագայի պատմութեան տեսակէտով միայն կարեւորութիւն մը կրնայ ունենալ: Հետեւաբար Մայր Դիւանս տեղեկագրին հրատարակութիւնը բաւական կը համարի եւ կ'առաջարկէ փակուած համարիլ այս խնդիրը մերժելով միեւնոյն ատեն Զիֆթէ Սարաֆէ Էֆ.ի հրաժարականը, որ առկախուած էր՝ պէտք եղած ատեն իրմէ իբրեւ երեսփոխան բացատրութիւն ստանալու համար իր տեղեկագրին առիթով:

2. — Սահմանադրական երկամեայ 1/5ի գաղափարն առիթով, վերջին անգամ խնդիր եղած էր թէ գաղափար երեսփոխանք իրաւունք ունին մինչեւ իրենց յաջորդին ընտրութիւնը՝ չարունակել պաշտօնին: Թեր ու գէժ յայտարարութիւններէ յետոյ, խնդիրը անցած էր օրակարգ: Մայր Դիւանս կը գիտէ որ չկայ ո եւ է օրինական ու կանոնական արգելք չչարունակելու արդի գրութիւնը, հետեւաբար կ'առաջարկէ ժողովին որ ընդունի մինչեւ նոր երեսփոխաններու ընտրութիւնը՝ գաղափարներու իրենց ամօրոնները պահելու իրաւունքը՝ այս իմաստով արամագրութիւն մ'ալ աւելցնելով վերաքննելի ներքին կանոնագրութեան մէջ, եթէ պէտք տեսնուի:

3. — Ներքին կանոնագրի բարեփոխութեան ձեռնարկուած էր իբր երկու տարի առաջ, յատուկ մասնախումբի մը միջոցաւ, որ ժամանակ մը գումարուելէ ու ծրագիր մը պատրաստելէ յետոյ ընդհատուած էր իր աշխատութիւնը: Հանգուցեալ Ստեփան փաշայի ժամանակին պատրաստուած ներքին կանոնագիրն ալ զանելու եւ զայն ալ աչքէ անցնելու համար Այդ աշխատութիւնը ունի իր կարեւորութիւնը այս պարագային մէջ ու կը կարծենք թէ կան ժողովականներ որոնք կրնան գոնէ ամօրոնական կերպով արամագրել Դիւանիս այդ կանոնագիրը, վերադարձուելու պայմանաւ: Յամենայն դէպս ներքին չէ որ այս խնդիրը միայն իր արդի քեալ վիճակին մէջ, ու Մայր Դիւանի հրաւերներն

ալ միան անպատասխանի, ինչպէս եղաւ այս տարի: Հետեւաբար կ'առաջարկենք որ Յանձնաժողովոյ վերջին անգամ ըլլալով հրաւեր մը ուղղուի, ամբողջացնելու համար իր աշխատութիւնը, եւ եթէ կան անոնց մէջ այնպիսիներ որոնց զբաղումները չեն թոյլատրեր մասնակցելու, կրնան հրաժարիլ եւ անոնց տեղ կ'ընտրուին յարմարագոյնները:

4. — Իրաւասութեան Դիւանը քննելով 1906-908 եւ 908-10ի կրօն, ժողովներու համարատուութիւնները, կ'առաջարկէ վաւերացնել զանոնք նոյնութեամբ ի բաց առեալ 1906-908ի տեղեկագրին մէջ, Օրմանեան Ս.ի ամբաստանութեան մասը, քանի որ Ազգ. ժողովը Սորհրդարանական Յանձնաժողովի քննութեամբ անպարտ հռչակեց Օրմանեան Ս.ը եւ հետեւաբար ներքին չէ որ զանազան ձեւերով նորանոր ամբաստանութիւններ երեւան գան եւ ժամավաճառ ընեն ժողովս, մանաւանդ որ անպարտութեան վճիռ մը անփոփոխելի է երբ կը տրուի մանաւանդ արգմանկողմանի քննութեան մը վրայ հիմնուած: Միայն Իրաւասութեան Դիւանը կ'առաջարկէ այդ երկու համարատուութիւններու մէջ չեն եկեղեցական բարեկարգութեան մասին եղած թելադրութիւնները, նոյնպէս ամուսնական ու ամուսնալուծական կանոնագիր մը պատրաստելու առաջարկները զատելով, միացնել Ամենայն Հայոց Հայրապետին մատուցանելի բաղձանքներուն, իբրեւ էական կարեւորութիւն ունեցող խնդիր: Այս տեղեկագիրը արդէն տպագրուած եւ ցրուած ըլլալով Պատ. երեսփոխանաց, անշուշտ ուսումնասիրուած է անոնց կողմէ, հետեւաբար Մայր Դիւանս կ'առաջարկէ նոյնութեամբ ընդունիլ Իրաւասութեան Դիւանի եզրակացութիւնը եւ բարեկարգական ու ամուսնական մասերը աւելցնել Ս. Հայրապետին մատուցանելի յիշատակագրին վրայ:

5. Հանգուցեալ երեքեան Ս.ի խնդիրն ալ օրակարգի վրայ կը գտնուի տարիներէ ի վեր եւ յոյժ ցաւալի է որ կարելի չեղաւ եղբերակացնել զայն ի կենդանութեան Ն. Սրբազնութեան, որուն յիշա-

տակը չարատարելու նախանձախնդրութեամբ, մէկ քանի երեսփոխաններ առաջարկեցին յետ մահու իսկ արգարութիւնը երեւան հանել: Ժողովը այս խնդիրը այդ ձեւով անցուց օրակարգ, թէեւ գործնականին մէջ գաղափարութիւն կատարելու հնարաւորութիւն չկար, վախճանած ըլլալով ամբաստանեալը, բայց կազմուեցաւ խորհրդարանական յանձնաժողով մը որ հրաւիրեց ամբաստանող Էսմէրեան Էֆ.ին ներկայացնելու համար իր ամբաստանութիւնները: Բայց Էսմէրեան Էֆ. որուն պատասխանը հրատարակուեցաւ ատենադրութեան մէջ, կ'ըսէ որ թէեւ պատրաստած է իր գրաւոր ամբաստանութիւնը, բայց յետ մահու երէցեան Ս.ը այլ եւս ամբաստանելու պէտք չի տեսնել, քանի որ նա ալ արդէն ինքզինքը պաշտպանելու եւ արդարացիելու վիճակին մէջ չգտնուիր, իսկ եթէ Ազգ. ժողովը անպատճառ կ'որոշէ որ յանձնէ իր ամբաստանագիրը պատրաստ է տալու ժողովին: Խորհրդարանական յանձնաժողովը Էսմէրեան Էֆ.ի բերանացի եւ գրաւոր այս անորոշ պատասխանին վրայ անպարտ հռչակած է երէցեան Ս.ը, ինչպէս արդէն օրէնքէ գաղափարութեան մէջ, Դիւանս այս խնդրոյն երկարաձգութեան ու եւ է բարոյական օգուտ չակնկալել հետեւաբար կ'առաջարկէ ընդունիլ խորհրդարանական յանձնաժողովոյ եզրակացութիւնը եւ փակել այս խնդիրը:

6. Վանայ Գարամաճեան Էֆ.ի սպասութեան հեղինակը երեւան հանելու համար Ազգ. վարչութեան եւ Ս. Նախագահին կողմէ պէտք եղած հետապնդութիւնները չգործադրուելու պարագան, թէեւ հերքուեցաւ յատենի ժողովիս, բայց հարցումը ներկայացնող պատ. երեսփոխաններ հարցապնդման վերածելով խնդիրը օրակարգ անցաւ եւ գրուեցաւ նաեւ վարչութեան, որպէս զի պատրաստուի հարկ եղածը պատասխանելու յատենի ժողովիս: Եթէ ժողովը կը փափաքի, խօսք կուտանք վարչութեան ներկայացուցչին, որուն տուած բացատրութիւնը ժողովիդ գնահատման եւ քուէին կ'ենթարկենք,

հասկցուելու համար թէ որքան գոհացուցիչ կերպով վարչութիւնը կատարած է իր պաշտօնը այս խնդրոյն մէջ:

7. Աղթամարի խնդիրը առաջին անգամ ժողովոյ սեղանին վրայ եկած է 1909ին եւ քննութեան համար վարչութեան յղուած է որ իր մէջէն յանձնաւոր մը կազմած է: Այս մարմինը որ կը բաղկանար Տ. Հմայեակ Ս.է, Տ. Գարեգին Վ.է եւ Մ. Շիրինեան Էֆ.է, Ազգ. ժողովոյ 1909 Հոկտեմբեր 18ի նիստին ներկայացուցած է իր տեղեկագիրը, որ քննութեան արժանի մէկէ աւելի կէտեր եւ նկատողութեան արժանի 16 առաջարկներ կը պարունակէ: Ժողովը իրացուցած եւ օրակարգ անցուցած է խնդիրը, բայց 6 Նոյեմբեր 1909ի նիստին Զօհրապ Էֆ.ի բանաձեւով, խնդիրը վերադարձուած է վարչութեան, որովհետեւ Ազգ. ժողովին տեղեկագիր ներկայացնող յանձնաժողովը ըստ օրինի վարչութեան ընտրուած էր, հետեւաբար իր տեղեկագիրը պէտք է ներկայացնէր նոյն մարմնոյն որ իւրացնելով խնդիրը, կրնար իր եզրակացութիւնը բերել ժողովիս: Ու վերջապէս 11 Յունիս 1910ի Ժ.Չ. նիստին Վ. Փափազեան Էֆ.ի մէկ հարցման վրայ, Ազգ. ժողովը վարչութեան անդամներու բացատրութիւնները լսելով՝ կ'որոշէ որ վարչութիւնը Սրբաճեան Ս.ի եւ Վանայ Գաւառ. ժողովին միջոցաւ քննութիւն մը կատարէ Աղթամարայ անցեալ դէպքերուն վրայ ու արդիւնք բերէ ժողովին, իսկ Աղթամարայ ներկայ եւ ապագայ բարեկաւարութեան նպատակով 16 առաջարկներու նկատման եւ գործադրութեան մասին չէ տրուած ո եւ է որոշում: Անտի ցայսօր ո'չ Ազգ. ժողովը հետապնդած է խնդիրը եւ ոչ վարչութիւնը ո եւ է անօրինութիւն ըրած, որովհետեւ 8-10 ամիս կեանք ունեցող վարչութիւններ հազիւ օրը օրին իրենց օրակարգի խնդիրներու քննութեամբ զբաղած են: Հետեւապէս Մայր Դիւանս կ'առաջարկէ յատուկ եկեղեցական պատուիրակ մը զրկել, որ կատարէ եւ տեղեկագրէ Պատրիարքարան յանձնարարեալ քննութիւնը ի ձեռն յատուկ մասնա-

խումբի մը, որովհետեւ վաճառ Գաւառ. Ժողովոյ արդի ընտրեալ ատենապետը, յանուանէ ամբաստանուած է այս խնդրոյն մէջ եւ բաց աստի Աղթամար իր վիճակով, Կիլիկիոյ Աթոռին նման ուրոյն կազմակերպութիւն ունի, անկախ վաճառ Գաւառ. Ժողովէն, որուն իրաւասութիւնը չտարածուիր մինչեւ Աղթամար, որ իր յատուկ թեմական Ժողովը պէտք է ունենայ ինչպէս ունի իր երեսփոխանը Ազգ. Ընդհ. Ժողովի մէջ, եւ որովհետեւ անցեալ դէպքի մը քննութիւնը ներկային համար մեծ օգուտ մը չունի, կ'առաջարկենք վարչութեան ուղղորդութեան յանձնել 1909ի վարչական յանձնաժողովին Աղթամարայ Աթոռին համար ծրագրած բարեկարգական կէտերը:

Ահաւասիկ այս 7 խնդիրներն են, որոնք Մայր Դիւանիս կողմէ ուսումնասիրուելով, արդիւնքը կը ներայացնենք Պատ. Ժողովիդ, խնդրելով որ իր քուէով վճռէ անոնց ընդունելութիւնը կամ մերժումը եւ տարիներէ ի վեր անկախ մնացած այս գործերուն, ելք մը տայ այս կերպով:

Հ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ ԷՖ. — Կարգադրած տեղեկագրին մէկ կէտին համար միայն զիտողութիւն ունիմ: Երբ այս Ժողովը վարչութեան առջի չըջաններու համարատուութիւնն ալ տպագրել եւ ցրուել տուաւ որոշում տուաւ, չկրնար Սահմանադրութեան հոգակումն յետոյ կրօն. Ժողովոյ կրկին համարատուութեանց վրայէն այնքան թեթեւութեամբ անցնիլ եւ առանց քննութեան վաւերացնել, հետեւաբար, կ'առաջարկեմ կրօն. Ժողովոյ կրկին համարատուութիւնները պահել Օրակարգի վրայ: Համարատուութեանց վիճաբանութիւնը պարզապէս նոյն Ժողովին գործունէութիւնը չորոշեր, այլ մեր ազգային եւ երեւմտական քաղաքականութիւնը կը ճշդէ, հետեւաբար, չենք կըրնար այս կէտը թողուլ վարագոյրի ետեւ, ուստի, կ'առաջարկեմ որ համարատուութեանց խնդիրը մնայ օրակարգի մէջ:

Ձայներ. — Համամիտ ենք:

Ս. ԷՍՄԵՐԵԱՆ ԷՖ. — Ես գերեզման մտնողի հետ գործ չունիմ, իմ ամբաստանութիւնս Երէցեան Եպիս.ին մահէն յետոյ այլ ևս քննութեան առարկայ չկրնար ըլլալ: Բայց այս տեղ ունինք պաշտօնակիցներ, որոնք յետ մահու ալ եկեղեցւոյ բեմէն արդարացուցին զինքը: Եթէ դուք ալ ինքզինքնիդ ձեռնհաս կը նկատէք ծանօթ ուսուցիչ ձեր տրամադրութեան ներքեւ կը գտնուի, պէտք եղած քննութիւնը կատարեցէք. եւ եթէ կ'ուզէք արդարացուցէք: Այս Ժողովը Խորհրդարանական Յանձնաժողով մը կազմեց պէտք եղած քննութիւնը կատարելու համար եւ երկու օրէնսդէտ անգամներ կարգեց, որոնցմէ մէկը Մոստիշեան էֆ. առաջին օրէն հրաժարեցաւ, իսկ երկրորդը Խորասանճեան էֆ. մինչեւ վերջը մասնակցեցաւ. ասոնք, առանց անտուկին մէջի թուղթերը քննելու, ելան եւ Երէցեան Եպիս.ին անմեղութիւնը հոգակեցին. ես կը կարծեմ թէ այս կարգի ձեւակերպութիւններով հոգակում անմեղութիւն մը, նոյն իսկ հանգուցեալը չպիտի ընդունէր եթէ ողջ ըլլար: Բայց ինչպէս ըսած եմ, ես գրաւորապէս պատրաստած եմ իմ ըսելիքներս, սակայն, այլ ես աւելորդ կը համարեմ անոնք մէջեղ դնել, այս Ժողովը պէտք է չեղեալ համարէ խնդիրը բոլոր իրաւագէտներու կարծիքն ալ տարբեր բան մը չկրնար ըլլալ այս մասին:

Հ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ ԷՖ. — Գէորգ Եպիս. չուրջ յարուցուած խնդիրը ամէն բանէ առաջ արդարութեան խնդիր է. եւ այն որ ամբաստանուած էր, քանիցս դիմեց այս Ժողովին եւ խնդրեց որ դատեն զինքը, ըստ ինչ ամենէն մեծ յանցաւորը այս Ժողովն է որ հակառակ ամբաստանեալին պատրաստամանութեան երկար տեւեմ ճշգրեց խնդիրը, մինչեւ որ մահը վերջ տուաւ իր կեանքին, մեր այս ընթացքը մեկնուեցաւ այս կերպով որ կ'ուզէինք նիւթարկել զինքը տեսակ մը նշաւակման,

հետեւաբար, այս խնդիրը պէտք է փակել այնպիսի ձեւով մը որ իբրեւ թէ ամբաստանութիւն չէ եղած:

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ. — Ծանօթ է իրաւագէտներուն որ երբ ամբաստանեալը կը մեռնի, դատավարութիւնը կը դադրի, բացի նիւթական դատավարութենէն, եթէ այդ խնդրոյն մէջ ու եւ նիւթական խընդիր կայ:

Գ. ՉՕՀՐԱՊ ԷՖ. — Ես կը կարծեմ որ Դիւանի առաջարկը պէտք է ընդունիլ մեռնող անձնաւորութեան դէմ պատժական դատավարութիւն չկրնար կատարուիլ, դատ մը անհետեւանք թողուլ տարբեր խնդիր է անպարտ ըսելը տարբեր խնդիր է, որովհետեւ յանցանքին թեթեւացումը կը նշանակէ: Կրնար ըլլալ որ քննութիւնը հակառակը ցուցնէր, սակայն երբ ամբաստանեալը դիմումներ կ'ընէ եւ քննութիւն կը պահանջէ, չտապիլ եւ ամբաստանութեան յատուկ ապացոյցները ներկայացնել ամբաստանողին յատուկ է, իսկ անհետեւանք թողուլ անպարտութեան վճիռ չէ, այլ խնդիրը չզիտողութեան համար կասկածի տակ պահել կը նշանակէ. արդ այս պարագային մէջ մեր վրայ ծանրացող բարոյական պզտիկ պատասխանատուութիւն մը կայ. եւ ճշմարիտ արդարութիւնը կը պահանջէ որ այս պարագան հոգակենք:

ՏՕՔԹ. ԿԱՐԱՊԵՏ ԷՖ. ՓԱՇԱՅԵԱՆ. — Վճիռի մը ձեւը կը պահանջէ որ երկու կողմը լսելով տրուի: Յետ մահու ինչպէս կրնայ քննութիւն կատարուիլ չեմ հասկընար, հետեւաբար, այս պարագային մէջ տրուածը վճիռ չէ, մինչդեռ անպարտ է ըսելը այս կատարուած գործողութեան հետ հակասական է:

ԵԴ. ՇԻՐԻԼԵԱՆ ԷՖ. — Յետ մահու քննութիւն կրնայ կատարուիլ:

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ. — Գործ մը անհետեւանք թողուլը եւ անպարտ արձակելը

միեւնոյն բաները չեն. կ'ընդունիմ թէ Ժողովը կամ քննիչ մարմինը պէտք է փութացնէր այս քննութիւնը Գէորգ Եպիս.ին մահը վրայ չհասած սակայն, որքան ամբաստանեալը քննութիւն կը պահանջէր նոյնքան եւ ամբաստանող էսմէրեան էֆ. պատրաստակամութիւն կը յայտնէր հետեւեալ. իր ամբաստանութիւնները, խնդրոյ մը անհետեւանք մնալը ոչ մէկը դատապարտելու եւ ոչ ալ զայն մաքուր հռչակելու կը ծառայէ:

Վ. ՍԷՐԷՆԿԻԻԼԵԱՆ ԷՖ. — Ու եւ մէկը մեռած է ըսելով իր խնդիրը անհետեւանք թողուլը սխալ է. մէկը եթէ մեռնի իսկ, իր խնդրոյն պէտք է հետեւանք տալ եւ իր անպարտութիւնը հոգակել, ես արդարութեան պահանջը այսպէս գիտեմ:

Յ. ՊՕՅԱՃԵԱՆ ԷՖ. — Կ'ուզեմ, իբրեւ քննիչ Յանձնաժողովի անդամ, այս խնդրոյն պատժականը ընել: Յանձնաժողովս հրաւիրեց էսմէրեան էֆ ին որպէս զի բերանացի բացատրութիւններ տայ, էսմէրեան էֆ. չուզեց ըսել. յետոյ գրաւոր պահանջուեցաւ, եւ այդ առթիւ ըսաւ որ իմ Ժառանգորդներուս կատակած եմ, իմ մահուանէս յետոյ այդ ամբաստանութիւնները երեւան դնելու, մենք ալ տեսանք որ ուրիշ ճար չկայ եւ անպարտութեան վճիռ տուինք. խնդրոյն դատաստանը ամբողջ ազգին կը վերաբերի:

Ս. ԷՍՄԵՐԵԱՆ ԷՖ. — Ես անձնակատութեան հետ գործ չունիմ, եթէ տեղեկագիրը միայն Խորասանճեան էֆ. ստորագրած ըլլար կը հասկնայի որ դատավարական սկզբունքներու ծանօթ ըլլալով իր այդ հանգամանքովը որոշում մը տուած է, բայց տեղեկագիրը միւս ստորագրողները, ինչպէս կ'երեւայ չեն հասկցեր: Երբ տան ինչպէս կ'երեւայ չեն հասկցեր: Երբ տան մը մէջ գող կը մտնայ, տունին տէրը ոստիկանութեան իմաց կուտայ թէ այսինչ տունը գող մտած է եւ ոստիկանութիւնը տունը կը պաշարէ եւ գողը կը փնտռէ ու կը գտնայ, ոչ մէկ տանու տէր կը տանի:

գողը կը ցուցնէ, ես իմ ամբաստանողի հանգամանքիս մէջ՝ ըսի որ պէտք եղած քննութիւնը կատարեն, որպէս զի վճիռը ձեռնհասօրէն տրուի. այդ Յանձնաժողովը երէցեան Ս.ի գրութիւնները աչքէ անցունց. ո՛չ ուրեմն, ի՞նչ բանի վրայ տրուած է անպարտութեան վճիռ տրուի, շատ մեծ սխալ մը գործած կ'ըլլայ այս ժողովը:

Գ. ԶՕՀՐԱՊ ԷՖ.— Եթէ իմ պաշտօնակիցներս այս խնդրոյն վրայ երկրորդ անգամ խօսք առած չըլլային, ապահովաբար ես ալ խօսելու պէտք չպիտի ունենայի. իմ բարեկամներս կ'ըսեն թէ ամբաստանեալի մը դէմ խօսուածները ապացուցանել որովհետեւ հնարաւոր չէ, հետեւաբար քննութեան շարունակութիւնն ալ կարելի չէ: Միթէ անմեղութիւնը ինքնին ապացուցութեան կարօտ է: Որովհետեւ ամբաստանութեան տակ է, որ սեղ է ուրեմն արդարութեան ոչ մէկ կանոնի կրնայ ենթարկուիլ, ո եւ է մէկը ամբաստանութեան ներքեւ ըլլալու համար, պէտք է գոնէ նախնական քննութիւն մը տեղի ունենայ. իր ամբաստանութեան հիմը կազմող խնդիրները իրեն ներկայացունին, բայց որովհետեւ ասոնցմէ եւ ոչ մէկը տեղի ունեցած է, հետեւաբար հանգուցեալ Սրբազանին անմեղութեան մասին տրուած վճիռ մը ո եւ է կասկածի տակ չկրնար ձգուիլ: Ես այս պարագային մէջ անխուսափելի խօսեցայ, ապա թէ ոչ, ոչ իսկ կը ճանչնամ հանգուցեալ երէցեան եպս.ը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Այս խնդիրը բաւական լուսարանուեցաւ, բայց ժողովին մէջ երկու կարծիք կայ. առաջին Յանձնաժողովոյ եւ Դիւանիս եզրակացութեան համեմատ՝ Գէորգ եպս.ի անմեղութիւնը հռչակելու խնդիր, եւ երկրորդ, այս խնդիրը անհետեւանք թողելու առաջարկ: Ժողովիդ քուէիս կ'ենթարկեմ այս երկու կէտերը:

(Ատենապետ ԷՖ. խնդիրը քուէի դնելով ժողովը 15ի դէմ 26 քուէով անպարտ հռչակեց հանգուցեալ Գէորգ Արք. երէցեանը, իր վրայ ծանրացող ամբաստանութեան):

ՏՕՔԹ. ԿԱՐԱՊԵՏ ԷՖ. ՓԱՇԱՅԵԱՆ.— Մայր Դիւանին ներկայացուցած տեղեկագրին մէջ Գաբամաճեան ԷՖ.ի սպանութեան խնդրոյն յիշատակութիւնն ալ կայ: Վարչութեան կողմէ այդ մասին քանի մը բացատրութիւններ տալ յարմար կը դատուի. երբ վանի Առաջն. Տեղապահէն հեռագիր եկաւ թէ Գաբամաճեան ԷՖ. սպանուած է, հարկադրուեցանք հեռագրել եւ հարցնել թէ ո՞՞րք ի՞նչ կերպով տեղի ունեցեր է, որովհետեւ առաջին հեռագրին վրայ չէինք կրնար խնդիրը ներկայացնել կառավարութեան, իսկ Առաջն. Տեղապահին հեռագրած մանրամասնութեան վրայ, անմիջապէս Բ. Դուռ դիմում ըրինք, որիկէ պատասխանուեցաւ մեզի թէ սպանեալին զաւակին ցուցմունքին վրայ ո՞՞րք ո՞՞րք ձերբակալուած է: Այս խնդրոյն մանրամասնութիւնները պարունակող տեղեկագիրը հասաւ Յունւար 15ին, ուրիկ տեղեկացանք որ ո՞՞րք ո՞՞րք անյայտ են, բայց եղած կասկածներու վրայ երկու Հայեր ձերբակալուած են: Երբոր մեր ազգային չըջանակէն եկած այս տեղեկութիւնները առինք, Ս. Պատրիարքը դիմեց Լ. բերանացի կերպով պահանջեց որ անմեղ Հայերը արձակուին, նախ գրաւոր թագրի չէ ներկայացուած, այլ միայն գործակատարը գացած է մինչեւ հարցումն օրը, իսկ հարցումն յետոյ թագրի մը գրուած է, եւ այդ թագրի մը պատճենն ալ մեր քովը ըլլալով կը կարգանք. երբոր այդ թագրի մը բաւարարութիւն չէ տրուած երկրորդ թագրի մ'ալ գրուած է:

Ատլիյէ վէ մէզահիպ նէզարէթը ճէլիլէսինէ եազլւան 13 մարտ 329 թարիխի վէ 730 նումէթուր թագրի մը սուրէթի տիւր վան Էրմէնի միւթէպէրանընտան պէլէտիյէ րէյսի Գաբամաճեան Պետրոս Է. ֆէնտի կէչէն չէնը քեանուըն էվլէլին

23ինձի կիւնի գաթի իտիլիկի հալաէ ճիւնայէթը մէզբիւրէ ֆաիլլէրի պու կիւնէ գաաար զահիւրէ չըգարըլմամը վէ ֆիլիլ մէզբիւրէն ուլայը սըրֆ զանն վէ չիւպ-հէ իւզլիլին պազը մաաում քէսանըն էլան մէվգուֆ պուլուսաղը անլաշըմըլ օլաաղընտան աաըլ միւթէճասըրը ճինայէթ օլանլարըն պէհէմէհալ վէ սէրիյան զահիւրէ չըգարըլարազ հազլարընտա թաազիւ պաթը գանուիյէնին սիւրաթլա իճրասը զըմընտա իգթիպայի հալին իյֆա պուլըլմասը միւսթէտա տըր օլպապտէ:

Ատլիյէ վէ մէզահիպ նէզարէթը ճէլիլէսինէ եազլւան 25 հազիւրան 329 թարիխի վէ 977 նումէթուր թագրի մը սուրէթի տիւր վան Էրմէնի միւթէպէրանընտան պէլէտիյէ րէյսի օլապ կէչէն չէնը քեանուըն էվլէլին 23ինձի կիւնի գաթի իտիլիյէ Գաբամաճեան Պետրոս ԷՖ.ին գաթիլլէրին զահիւրէ իխրաճը իլէ հազլարընտա միւթթաղիյաթը գանուիյէնին սիւրաթը իյֆասը զըմընտա իճապ իտէլլէրէ էմր ու իշար պուլըլմասը 13 մարտ 329 թարիլս վէ 730 նումէթուր թագրի մը տալիանէմէ իսթիտա օլուսմըլտը. ճինայէթը մէզբիւրէ ֆաիլլէրի հէնուզ զահիւրէ չըգարըլմամը վէ պու հալ մահալինճէ սուլի թէլէսիլի մուճիպ օլմուշ օլաաղընտան իպրէթէն լիւսայիլին միւթէճասըրլէրին պուլտըրըլպ թէճգիլլէրի զըմընտա իճապ իտէլլէրէ թէպիլլաթը մուէսսիլի իճրա պուլըլմասը թէթըրը իսթիտասընա իպթիտար զըլընտը օլպապտէ:

ՏՕՔԹ. Ս. ԹԵՐԶԵԱՆ ԷՖ. — Երկու թագրի գրուած է այս խնդրոյն համար, երկրորդով ալ կրկնուած է առաջինին մէջ եղած խնդիրը: Այս խնդրոյն մէջ մեր տեսակէտը այն եղած է որ բուն յանցաւորները անյայտ մնալով անոնց տեղ անմեղները չի պատժուին: Մեր բուն նպատակը անմեղներուն բանտէն արձակուիլն էր, ոչ թէ յանցագործին ծածկուիլը:

Յ. ՃԱՆԿԻԻԼԵԱՆ ԷՖ. — Գաբամաճեան ԷՖ.ի սպանութեան խնդրոյն համար այս

ժողովին մէջ հարցում ընողը ես էի. տրուած այս պատասխաններն ալ ո եւ է կերպով գոհացում չեն տար ինձ: Զիս աւանդէն աւելի հետաքրքրող այն կէտն է որ երբ Առաջնորդարանը ամենափոքր ղէպքերու համար նամակ ու հեռագիր կ'ուղղէ Պատրիարքարան, ի՞նչպէս կ'ըլլայ որ Գաբամաճեան ԷՖ.ի սպանութեան ղէպքի մը նման կարեւոր պատահարի մը համար տեղեկութիւն չէր տար, եւ մանաւանդ ի՞նչպէս կ'ըլլայ որ վարչութիւնը չհետաքրքրուի այսքան կարեւոր գործով մը: Գրուած առաջին թագրի մը պատակ ունի բանտարկեալները ազատ արձակել տալու: Իսկ երկրորդ թագրի մը որ 3 միւս յետոյ տրուած է ամէն կողմէ յարուցում չընկներու վրայ ցոյց կուտայ թէ այս գործը որքան կարեւորութեամբ հետապնդուի է: Վերջապէս վարչութեան երկու անդամներու յայտարարութիւնն իմ հանած հետեւութիւնս այն է որ վարչութիւնը ո՛չ պէտք եղած պրպտումը կատարած է եւ ո՛չ ալ իր բաժնին ինկած պարտականութիւնը:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թեր ու դէմ բաւանները լսեցիք, այս խնդիրն ալ ձեր քուէին կ'ենթարկեմ:

(Ատենապետ ԷՖ. քուէի դնելով այս խնդիրը, ժողովը 6ի դէմ 17 քուէով ընդունեց վարչութեան յայտարարութիւնը):

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ ԷՖ. — Մայր Դիւանին տեղեկագրին մէջ յիշուած է նաեւ Աղթամարայ խնդիրը, եթէ այս խնդրոյն երկամարայ խնդիրը մէջ ո եւ է թերացում կայ, այն ալ վարչութեան չվերաբերիր, որովհետեւ արդէն խնդիրը Ազգ. Ժողովոյ օրակարգին մէջ կը գտնուի. ասկէ զատ, այդ քննութիւնը վանայ Գաւառ. Ժողովը չկրնար կատարել, որովհետեւ Աղթամար իր ուրոյն Գաւառ. Ժողովը ունի: Վանայ Գաւառ. Ժողովոյ ատենապետը

Վ. ՍԷՐԷՆԿԻԻԼԵԱՆ ԷՖ. — Ես միայն պատուիրակի խնդրոյն վրայ պիտի խօս-

սիմ, չկրցայ հասկնալ թէ ինչո՞ւ Աղթա-
մար եկեղեցական պատուիրակ կ'երթայ,
եւ ոչ աշխարհականս Այն տեղ զեղծում-
ներու հարց կայ եւ ոչ թէ կրճաղան
խնդիր. հետեւ արար աւելի աշխարհականի
գործ է ասիկա, եթէ աշխարհականի վրայ
վստահութիւն չկայ, կան այնպիսի եկե-
ղեցականներ որոնց վրայ ալ վստահութիւն
չկրնար ըլլալ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Աղթամարայ խնդ-
րոյն համար ալ Դիւանիս եզրակացու-
թիւնը ձեր քուէին կ'ենթարկեմ, անոնք
որ կ'ընդունին յայտնեն իրենց հաւանու-
թիւնը:

(Աստեղագետ Էֆ. քուէի գնելով այս
կէտն ալ, միաձայնութեամբ ընդունուեցաւ
եւ պահ մը զաղար տըռեցաւ ժողովին):

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիւանիս ներկայա-
ցուցած տեղեկագիրը յետ վիճաբանու-
թեան ընդունուած է նոյնութեամբ, հիմա
ձեր որոշման կ'ենթարկեմ վարչութեան
պաշտօնագիրը, երեսուղէմի մէջ գործա-
դրուելիք բարեկարգութեանց ընդդիմացող
միարաններու մասին:

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ ԷՖ. — Ես յօդուածը
մութ կը գտնեմ, պէտք է բացորոշ կեր-
պով ըսել ամէն բան, գործադիր մարմնոյն
ձեռքը զէնք չտալու համար:

Պ ՓԱՓԱՋԵԱՆ ԷՖ. — Ասոնք առժամ-
եայ միջոցներ են, երբ վստահութիւն ու-
նիք վարչութեան վրայ պէտք է թոյլ
տաք որ, մինչեւ որ վերջնականագէտ
հաստատուի բարեկարգութիւնը պէտք ե-
ղած կերպով գործէ:

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ ԷՖ. — Վստահութիւն
ունենալով հանդերձ վարչութեան վրայ,
փափաքելի է ճշգիւ թէ ինչ պիտի ըլլայ:

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ. — Երբ կանոնին
ընդունուած յօդուածներուն գործադրու-
թիւնը վարչութեան կը յանձնուի, այս
երեք յօդուածները ներկայացնել իր ի-
րաւունքներն են:

Ա. ԳԱՍՊԱՐԵԱՆ ԷՖ. — Օրէնքը կրնայ
գործադրութեան զուգի վանաղան միջոց-
ներով, բայց որպէս զի գործադրութիւնը
կատարեալ ըլլայ վարչութիւնը իրեն հա-
մար էական կը համարէ ներկայացնել այս
յօդուածներուն ընդունելութիւնը:

Հ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ ԷՖ. — Վարչութեան
ներկայացուցած այդ քանի մը կէտերը
այնքան պարզ բաներ են որ ես գրուած
ըլլալը իսկ աւելորդ կը նկատեմ. վար-
չութիւն մը պէտք է ունենայ հարկ եղած
հեղինակութիւնը ո եւ է ըմբոստութիւն
զսպելու համար: Ազգը կառավարութեան
միջոցով մինչեւ իսկ կ'իյրկիւր կաթողի-
կոսը հոս բերած է, ու ոչ ոք կրցած է
գիտողութիւն ընել որ օրէնքի գէժ բան
մը տեղի կ'ունենայ: Երբ Ազգային ժո-
ղովէն ընդունուած բարեկարգական կա-
նոններու գործադրութիւնը դժուարու-
թեան կամ արգելքի հանդիպի շատ բնա-
կան է որ այդպիսիներու դէմ հարկ եղած
միջոցները պիտի գործադրուին, հետեւա-
բար իրաւունք չունիք կասկածով նայելու
այդ քանի մը յօդուածներու վրայ, որոնք
իրեւ օրէնք ալ չէք քուէարկեր:

ԱՏԵՆ. ԷՖ. — Ուրեմն վարչութեան ա-
ռաջարկած այդ երեք յօդուածներուն ըն-
դունելութիւնն ալ ձեր քուէին կ'ենթար-
կեմ:

(Ժողովը մեծամասնութեամբ ընդունեց
այդ երեք յօդուածները):

Յ. ՇԱՀՐԻԿԵԱՆ ԷՖ. — Ես պէտք կը
զգտամ յիշեցնելու ժողովիդ որ, գործելու
այս իրաւունքը վարչութեան տրուելէ յե-
տոյ, եթէ տակաւին ապադի վարչութիւ-
նը իր կարգադրութեանց մէջ, պատաս-
խանատու ըլլայ ժողովիս առջեւ. չեմ գի-
տեր թէ տարբեր կարծիք ունեցող կայ
այս մասին:

Ձայներ. — ձիշդ է՝ ճիշդ է:

(Աստեղը փակուեցաւ ժամը 5.30ին):

Աստեղագիր Աստեղագետ
Հ. Արամեանց Յ. Պոյանեան

(Դ. Վիճակ)

Գում գարու, Գումգարուի դուրս
69. Դաւիթ Էֆէնտի Տէր-Մովսէսեան
70. Համբարձում » Պոյանեան
71. Սարգիս » Սուխ
72.

Կէտիկ փաշա

73. Հմայեակ Էֆէնտի Արամեանց
74. Յարութիւն » Ճանկիւլեան
75. Յակոբ » Աւետիսեան
76. Յակոբ » Նշանեան
77. Ներսէս » Զաքարեան

Սամաթիա Ս. Գէորգ

78. Գրիգոր Էֆէնտի Զօհրապ
79. Լեւոն » Սաաթեան
80. Հայկ » Խօստաարեան
81. Պարգեւ » Փափագեան
82. Լեւոն » Սեդրոսեան
83. Ռուբէն » Փափագեան
84.

(Ե. Վիճակ)

Գումգարուի Դիւանի

85. Երուանդ Էֆէնտի Խորասան
86. Լեւոն » Տէմիրճիպաշեան
87. Ռուբէն » Զարդարեան
88. Ոսկան » Մարտիկեան
89. Կոպեռնիկ » Խաչատուրեան

Թօփ-գարու

90. Գէորգ Էֆէնտի Սիմէշեան
91. Երուանդ Էֆէնտի Օտեան

Նաուր-գարու

92. Նշան Էֆէնտի Գալպեան
93. Տիգրան » Մանուկեան

Սամաթիա Ալեքսան

94. Պետրոս Էֆէնտի Գալպեան

Սկիւտարի Ս. Նաչ

95. Բարսեղ Էֆէնտի Աւետիսեան
96. Գարեգին » Տէմիրճիպաշեան
97. Յարութիւն » Շահրիկեան
98. Վարդգէս » Սէրէնկիւլեան
99. Յակոբ » Միլասեան

Ռու. Մէլի-ճիսար, Պոյան-գիւղ, Եֆէնտի-գիւղ
100. Արթուր Էֆէնտի Տէր Յակոբեան

ԳԱՆԱՌԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՆԱՆԵՐ

(Ա. Վիճակ)

Եկիպոտոս
101. Վահան Էֆէնտի Թէքեան
102. Յակոբ Էֆէնտի Պօնոսեան
103. Տօբ. Փաշայեան Էֆէնտի
104. Սողոմոն Էֆէնտի Տէր-Ազարեան
105. Արամ Էֆէնտի Անգոնեան

Մուշ

106. Գեղամ Էֆէնտի Տէր-Կարապետեան
107.

Տրապիզոն

108. Օննիկ Էֆէնտի Զիֆթէ-Սարաֆ

(Բ. Վիճակ)

Աղթամար

109. Ա. Վառմեան Էֆէնտի

Բալու

110. Գամէր Էֆէնտի Շիրինեան

Եզդլատ

111. Աւետիս Էֆէնտի Ճինիլիզեան

Կեսարիա

112. Վահան Էֆէնտի Էսեան

Հալէպ-Այնթապ

113. Սարգիս Էֆէնտի Գնաթեան

Նիկոմիդիա

114.

Պաղտատ

115. Տօբ. Ներսէս Էֆէնտի Թիւեան

Սղերդ

116. Սերովբէ Էֆէնտի Նորատունկեան

(Գ. Վիճակ)

Ալն

117. Ատովմ Էֆէնտի Երեցեան

Արարկիր

118. Արթաքի Էֆէնտի Սարաֆեան

Եդեսիա

119. Սեպուհ պէյ Իւթիսեան

Զգմիւռնիա

120. Լեւոն Էֆէնտի Տնտեսեան

Հանք

121. Տէվլէթ Էֆէնտի Տատրեան

Մալաթիա

122.

Պանտրմա-Պալլաքսի

123. Տիրան Էֆէնտի Երկանեան

Վան

124.

(Դ. Վիճակ)

Ադրիանուպոլիս

125.

Ատանա

126. Արիստակէս Էֆէնտի Գասպարեան

Բաղէշ

127. Աղեքսանդր Էֆէնտի Փանոսեան

Կոստինա-Աֆիոն-Գարա-հիսար

128. Զարեհ Էֆէնտի Խորասանեան

Պրոուսա

Գաղատիա

129. Գասպար Էֆէնտի Նեմցէ
Ռօտոսթօ
130. Միհրդատ Էֆէնտի Հայկազն
Տիգրանակերտ
131. Տիգրան Էֆէնտի Նազաշեան
Տիվրիկ
132.
(Ե. Վիենակ)
Ամասիա—Մարզուան
193. Տիգրան Էֆէնտի Մարտիկեան
Բաբերդ
194. Յարութիւն Էֆէնտի Դարբինեան

135. Տր. Խաչիկ Էֆէնտի Պօղոսեան
Դոնեա
136. Բարձող Էֆէնտի Զօրեան
Երզնկա
137. Գաբրիէլ Էֆէնտի Նորատունկեան
Մարաշ—Ձէյթուն
138. Սմբատ Էֆէնտի Բիւրատ
Շապին—Գարահիսար
139. Ժագ Էֆէնտի Սայապալեան
Սերաստիա
140. Տօքթ. Նազարէթ Էֆէնտի Տաղաւարեան

Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

- | | | | |
|-------------|--------------------------|--------------|-----------------------|
| Ա. Ատենապետ | Գաբրիէլ Էֆ. Նորատունկեան | Ա. Ատենադպիր | Հմայեակ Էֆ. Արամեան |
| Բ. , | Տր. Տաղաւարեան Էֆէնտի | Բ. , | Երուանդ Էֆ. Պէյազճեաղ |
| Գ. , | Պարգեւ Էֆ. Փափազեան | Գ. , | Աղեքսանդր Էֆ. Փանոսեա |

Ն Ա Խ Ա Ք Ն Ն Ի Չ Դ Ի Ի Ա Ն Ք

ՁԵՌՆՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Ա. Տ. Հմայեակ Արքեպս. Դիմաքսեան
Բ. Արամ Էֆէնտի Հալաճեան
Գ. Արշակ Էֆէնտի Ալոյաճեան

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Ա. Աստուածատուր Էֆէնտի Խաչատրեան
Բ. Մարկոս Էֆէնտի Նաթանեան
Գ. Հրանտ Էֆէնտի Ասատուր

ԿԱԼՈՒԱԾՈՑ ԴԻԻԱՆ

- Ա. Պենոն Էֆէնտի Տէյիրմէնճեան
Բ. Վահան Էֆէնտի Էսաեան
Գ. Թորգոմ Էֆէնտի Պոյաճեան

ՀԱՄԱՐԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Ա. Եղուարդ Էֆէնտի Շիրինեան
Բ. Խաչիկ Էֆէնտի Սըվաճեան
Գ. Լեւոն Էֆէնտի Տնտեսեան

ՅԱՐԱՔԵՐԱԿԱՆ ԴԻԻԱՆ

- Ա. Յարութիւն Էֆէնտի Մոստիլեան
Բ. Բարսեղ Էֆէնտի Ասետիսեան
Գ. Նշան Էֆէնտի Գալըպճեան

ԻՐԱԿԱՍՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Ա. Տ. Մաղաքիա Արքեպս. Օրմանեան
Բ. Դարեգին Էֆէնտի Տէմիրճիպաշեան
Գ.

ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Ա. Դաւիթ Էֆէնտի Տէր-Մովսէսեան
Բ. Հայկիկ Է. Էնտի Խօճասարեան
Գ. Յարութիւն Էֆէնտի Շահրիկեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԻԻԱՆ

- Ա. Բարձող Էֆէնտի Զօրեան
Բ. Վահան Էֆէնտի Թէքէեան
Գ. Ռուբէն Էֆէնտի Զարդարեան

ԵԼԵԻՄՏԻՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Գ Ի Ն 1 Ղ Ր ՈՒ Շ

Սեփականութիւն Ազգ. Սնտուկին, Ազգ. Ժողովոյ ծախուց յատկացեալ
Կը ծախուի յազգային հորհրդարան Ղալաթիոյ